ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 24 » սեպտեմբեր 2024թ. No 5131 - Ա

ՊԱԿԻՍՏԱՆԻ ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ NO 30, ՍԵԿՏՈՐ 28, ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՀԵՐԲԻՈՆ ՊԱԿԻՍՏԱՆ ՊՎՏ. ՍՊԸ, ՊԼՈՏ NO 30, ՍԵԿՏՈՐ 28, ԿՈՐԱՆԳԻ ԻՆԴԱՍՏՐԻԱԼ ԱՐԵԱ, ԿԱՐԱՉԻ, ՊԱԿԻՍՏԱՆ «ՆՈՎԵՔՍ ԱՄԲՐՈՔՍՈԼ ԱՄԲՐՈՔՍՈԼ (ԱՄԲՐՈՔՍՈԼԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ՕՇԱՐԱԿ 15ՄԳ/5ՄԼ; 90ՄԼ ԱՊԱԿԵ ՇՇԻԿ և ՉԱՓԻՉ ԲԱԺԱԿ, 120ՄԼ ԱՊԱԿԵ ՇՇԻԿ ԵՎ ՉԱՓԻՉ ԲԱԺԱԿ» ԴԵՂԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասը և 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձաքննության EL01/1773-24 առ 03.09.2024թ. բացասական եզրակացությունը՝ Պակիստանի Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի, Պակիստան «Նովեքս Ամբրոքսոլ ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) օշարակ 15մգ/5մլ; 90մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ, 120մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 22254 բացասական եզրակացությունը, առ այն, որ դեղի լիարժեք փորձաքննության համար անհրաժեշտ նյութերը չեն ներկայացվել, մասնավորապես՝ ստանդարտ:

Համաձայն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասի և 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետի՝ դեղի գրանցումը մերժվում է:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Պակիստանի Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր 28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Հերբիոն Պակիստան Պվտ. ՍՊԸ, Պլոտ No 30, Սեկտոր

28, Կորանգի Ինդաստրիալ Արեա, Կարաչի, Պակիստան «Նովեքս Ամբրոքսոլ ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) օշարակ 15մգ/5մլ; 90մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ, 120մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ» դեղի ընդհանուր հիմունքներով գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ՆԱՆՈՒՇՅԱՆ

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164